# ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ն.Մովսիսյան

**Դաս 1 Ծանոթություն շախմատի հետ**

**Ուսուցիչ** ______________________

| Առարկա **ՇԱԽՄԱՏ** | |
|---|---|
| Դասարան 2-րդ Ա, Բ, Գ | Ուս. տարի 2021-2022 |
| Դասի նպատակ | Ուսուցանել շախմատի խաղադաշտը ճիշտ տեղադրելը և խաղաքարերի անվանումները: |
| Դասի վերջնարդյունքներ | Սովորողը անվանում է և ցույց է տալիս բոլոր խաղաքարերը:<br>Կարողանում է ճիշտ տեղադրել խաղադաշտը: |
| Ընդհանրական խաչվող հասկացություններ | **Համակարգեր և մոդելներ**<br>Խաղաքարեր-Արքա, թագուհի, նավակ, փիղ, ձի, զինվոր<br>Խաղադաշտ-սպիտակ և սև դաշտեր |
| Միջառարկայական կապեր | Մայրենի լեզու – Անվանումները կարդալու, մտապահելու կարողություն: |
| Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ | Շախմատի ցուցադրական խաղադաշտ խաղաքարերով, շախմատի խաղադաշտեր խաղաքարերով, դասագիրք, աշխ. տետր: |
| Ուսուցման մեթոդներ | Խաղային ուսուցում, զրույց, պատմում, ցուցադրում, մրցակցային ուսուցում, խմբային աշխատանք: |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Աշխատանք գիրք-տետրում` Դաս 1:<br>Խաղ «Գուշակիր խաղաքարը» |
| Գնահատում | Իրականացվում է ձևավորող գնահատում: |

**Դասի ընթացքը**

- Ծանոթություն **8 րոպե**
- Նոր նյութի ուսուցանում` հետաքրքիր պատմություններով շախմատի ստեղծման, Իգաբել թագուհու մասին **7 րոպե**
- Խաղ «Գուշակիր խաղաքարը» **20 րոպե**
- Տրամագրերի լուծում աշխատանքային տետրերում **5 րոպե**
- Կատարված առաջադրանքի ստուգում զույգերով, ամփոփում **5 րոպե**

| |
|---|
| **Աշակերտներին տրվող հնարավոր հարցերի օրինակներ, որոնք ստուգում են վերջնարդյունքները.**<br>• Ինչպես ճիշտ տեղադրել խաղադաշտը:<br>• Ցույց տվեք և անվանեք խաղաքարերը: |
| **ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանք** |